ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է ՀՀ ԿԳ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

(30.01.2008թ. 21-03-06/67)

Բաղկացած է 9 թերթից
Ընդամենը 4 օրինակ
Օրինակ 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐ

Կ. Լ. ԱԹՈՅԱՆ

« 10 » 07 2013թ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարարության
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Եղեգնաձորի տարածքային
բաժնի կողմից 20.03.2008թ.
Գրանցման N 65.060.00594
Վկայական N 01Բ001862
ՀՎՀՀ 01503224
20.03.2008թ. գրանցված կանոնադրության
թիվ 01/2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
28.08.2013թ.

տարածքային բաժնի պետ՝

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

## “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ” ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

(խմբագրված տարբերակ՝ ՀՊՏՀ գիտական խորհրդի
2013 թվականի հուլիսի 10 N10 նիստի որոշման հիման վրա)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) մասնաճյուղն է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը» (այսուհետ՝ մասնաճյուղ): Մասնաճյուղը ստեղծվել է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ:

2. Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, համալսարանի և սույն կանոնադրություններով:

3. Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ և լիազորված է համալսարանի անունից իրականացնել սույն կանոնադրությանը համապատասխան գործունեություն:

4. Մասնաճյուղն ունի իր անվանմամբ կնիք և դրոշմակնիք:

5. Համալսարանի և մասնաճյուղի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, համալսարանի և սույն կանոնադրություններով:

6. Մասնաճյուղի անվանումն է՝

1) հայերեն՝ լրիվ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ.

2) հայերեն՝ կարճ՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ.

3) ռուսերեն՝ լրիվ՝ Егегнадзорский филиал Армянского Государственного Экономического университета.

4) ռուսերեն՝ կարճ՝ ЕФ АГЭУ.

5) անգլերեն՝ լրիվ՝ Yeghegnadzor Branch of Armenian State University of Economics.

6) անգլերեն՝ կարճ՝ YB of ASUE:

7. Մասնաճյուղի գտնվելու վայրն ու իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, քաղ. Եղեգնաձոր, 3601, Վայքի 4:

## II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

8. Մասնաճյուղի հիմնական խնդիրներն են՝

1) ըստ համալսարանի կրթական ծրագրերի՝ տնտեսագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը.

2) տնտեսագիտության և այլ գիտությունների բնագավառում գիտական, ուսումնամեթոդական հետազոտությունների իրականացումը.

3) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման կատարելագործումը.

4) գիտական մշակումների տարածումն ու լուսավորչական աշխատանքի իրականացումը:

9. Առաջադրված խնդիրներին համապատասխան՝ մասնաճյուղն իրավունք ունի՝

1) իրականացնելու ուսումնագիտական ծրագրեր.

2) համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ ներկայացնելու մասնաճյուղի կառուցվածքի, համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման և կառավարման համակարգի կատարելագործման վերաբերյալ.

3) մասնակցելու համալսարանի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակմանը.

4) համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը թեկնածություններ առաջադրելու գիտամանկավարժական գործունեության ասպարեզում ակնառու նվաճումների համար մասնաճյուղի աշխատակիցներին պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներով և մեդալներով պարգևատրելու, ուսման մեջ մեծ հաջողություններ ունենալու համար ուսանողներին անվանական կրթաթոշակներ սահմանելու նպատակով.

5) կազմակերպելու համալսարանի և այլ բուհերի ուսանողների փոխադրումը մասնաճյուղ.

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համալսարանի լիազորությամբ կնքելու պամանագրեր.

7) օգտագործման նպատակով, սահմանված կարգով, ձեռք բերելու գույք և սարքավորումներ.

8) տնօրինելու սեփական ֆինանսական միջոցները.

9) բացելու ընթացիկ բանկային հաշիվ:

10. Մասնաճյուղն իրավունք ունի իրականացնելու համալսարանի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) բարձրագույն մասնագիտական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության կազմակերպում.

2) գիտահետազոտական աշխատանքների իրականացում.

3) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.

4) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

5) ուսանողների և աշխատողների սննդի, հանգստի կազմակերպում.

6) հրատարակչական, տպագրական գործունեության իրականացում և դրա արդյունքների իրացում.

8) մշակութային գործունեության ծավալում:

## III. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Մասնաճյուղի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, համալսարանի և սույն կանոնադրություններին համապատասխան:

12. Մասնաճյուղի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) տնօրենի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կառավարման կոլեգիալ մարմին է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի կազմը

չի կարող գերազանցել մասնաճյուղի կոլեկտիվի թվի 20 տոկոսը: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են մասնաճյուղի տնօրենը, ով գիտական խորհրդի նախագահն է, փոխտնօրենը, գլխավոր հաշվապահը, ուսանողական խորհրդի նախագահը, մասնաճյուղի կազմում գործող այլ ստորաբաժանումների ղեկավարները: Ի պաշտոնե նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը: Գիտական խորհրդի մնացած անդամներն ընտրվում են մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի:

13. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Դրանք համարվում են իրավազոր խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե գիտական խորհուրդն այդ մասին այլ որոշում չի ընդունում: Գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են մասնաճյուղի տնօրենի հրամանով: Արտահերթ նիստերը հրավիրվում են գիտական խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

14. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) տնօրենի ներկայացմամբ հաստատում է մասնաճյուղի զարգացման գլխավոր ուղղությունները.

3) քննարկում և համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում առաջարկություններ՝ մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

4) քննարկում է մասնաճյուղի տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը և ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը.

5) քննարկում և համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում մասնաճյուղի տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը՝ համալսարանի նախահաշվի մեջ ընդգրկելու և համալսարանի խորհրդում հաստատման ներկայացնելու համար.

6) քննարկում և համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի կառուցվածքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

7) մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները.

8) համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի մասնագիտությունների և մասնագիտացումների ստեղծման, ուսումնական պլանների և դրանց փոփոխությունների վերաբերյալ.

9) քննարկում է մասնաճյուղի գիտական գործունեության հիմնական ուղղությունները, լսում հաղորդումներ կատարվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

10) համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում թեկնածություններ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար.

11) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող՝ մասնաճյուղի գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

15. Մասնաճյուղի տնօրինությունը տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, իր կանոնակարգին համաձայն և իրեն ընձեռնված լիազորությունների շրջանակներում, քննարկում է մասնաճյուղի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը: Մասնաճյուղի տնօրինության կազմի մեջ են մտնում տնօրենը, փոխտնօրենը, ուսումնական մասի վարիչը, ամբիոնների վարիչները, ուսանողական խորհրդի նախագահը: Տնօրինության որոշումները կենսագործվում են տնօրենի հրամաններով:

16. Մասնաճյուղի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Տնօրենն ընտրվում է բաց մրցույթի կարգով՝ համալսարանի խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով, և նշանակվում է համալսարանի ռեկտորի հրամանով: Տնօրենի և ռեկտորի միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները համալսարանի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները:

17. Մասնաճյուղի տնօրեն կարող է ընտրվել գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող, տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել մասնաճյուղի տնօրենի պաշտոնում: Տնօրենի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված կարգով:

18. Մասնաճյուղի տնօրենը՝

1) կազմակերպում է մասնաճյուղի գործունեությունը և դրա համար կրում պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով, գործում է համալսարանի լիազորագրի հիման վրա մասնաճյուղի անունից, ներկայացնում է նրա շահերը.

2) ռեկտորին է ներկայացնում մասնաճյուղի տնօրենի տեղակալի թեկնածությունը.

3) արձակում է հրամաններ, որոնց կատարումը պարտադիր է մասնաճյուղի աշխատողների և սովորողների համար.

4) ապահովում է համալսարանի խորհրդի, համալսարանի և մասնաճյուղի գիտական խորհուրդների որոշումների կատարումը.

5) կազմակերպում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.

6) հրավիրում է մասնաճյուղի գիտական խորհրդի, տնօրինության նիստեր և ապահովում այդ մարմինների սերտ համագործակցությունը.

7) համալսարանի լիազորությամբ՝ մասնաճյուղի անունից կնքում է պայմանագրեր.

8) համալսարանի ղեկավարության հետ համաձայնեցնելով՝ նշանակում և աշխատանքից ազատում է գլխավոր հաշվապահին, ուսումնական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

9) ըստ բնագավառների՝ կատարում է աշխատանքի բաշխում տնօրենի տեղակալի և ղեկավար այլ աշխատողների միջև, տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունների կատարումը դնում է փոխտնօրենի վրա.

10) իրականացնում է մասնաճյուղի ֆունկցիոնալ գործունեությունից բխող և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ.

11) գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով մասնաճյուղին պատճառած վնասի համար.

12) համալսարանի ռեկտորին (պրոռեկտորներին) հրամանագրման է ներկայացնում մասնաճյուղի ուսանողների ընդունելության, ազատման, վերականգման, տեղափոխության, համապատասխան արձակուրդ տրամադրելու և որակավորման աստիճաններ շնորհելու վերաբերյալ առաջարկություններ:

19. Մասնաճյուղի տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

20. Մասնաճյուղի տնօրենի տեղակալ (կամ տեղակալներից առնվազն մեկը) կարող է նշանակվել գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող տնտեսագետը՝ համալսարանի ռեկտորի հրամանով՝ մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ, և նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

21. Տնօրենի տեղակալն իրականացնում է մասնաճյուղի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարությունը՝ տնօրենի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան:

## IV. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

22. Մասնաճյուղի կառուցվածքը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից, մասնաճյուղի գիտական խորհրդի կամ տնօրինության առաջարկությամբ՝ համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա: Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների կազմը և իրավասությունները որոշվում են համալսարանի և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև համապատասխան կանոնակարգերով:

23. Մասնաճյուղն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական և արտադրական ամբողջություն է, որի միասնությունը ապահովվում է.

1) ուսումնական, կրթական կամ գիտահետազոտական գործընթացներին բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ.

2) կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մասնաճյուղի գիտական խորհրդի որոշումների, տնօրենի հրամանների և կարգադրությունների կատարմամբ:

24. Մասնաճյուղի ամբիոնը (բաժինը, լաբորատորիան) ստեղծվում է մասնաճյուղի գիտական խորհրդի կամ տնօրինության առաջարկությամբ՝ համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

3) միջոցներ, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից.

4) ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները և կտակված գույքը.

5) համալսարանի և սույն կանոնադրություններով նախատեսվող՝ համալսարանի կողմից երաշխավորված այլ տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

47. Մասնաճյուղի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ձևավորված եկամուտն ուղղվում է մասնաճյուղի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

48. Մասնաճյուղի աշխատողների աշխատավարձը, ուսանողների կրթաթոշակը վճարելու և այլ տնտեսական-գործառնական ծախսեր կատարելու նպատակով համալսարանի կողմից տրամադրվող միջոցների համար բանկում բացվում է ընթացիկ հաշիվ, որտեղից ստացված գումարները կարող են ծախսվել ըստ համալսարանի կողմից հաստատված նախահաշվի՝ մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

49. Մասնաճյուղը, համալսարանի կողմից սահմանված կարգով, պլանավորում և կազմակերպում է իր տնտեսական գործունեությունը, կրում պատասխանատվություն պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կարգով կատարելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքները խախտելու համար:

50. Մասնաճյուղն ապահովում է աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանները:

51. Մասնաճյուղի հաշվապահական հաշվառումը վարում է համալսարանը:

52. Մասնաճյուղին ամրացված գույքը կարող է օտարվել միայն համալսարանի կողմից՝ հիմնադրի համաձայնությամբ:

53. Մասնաճյուղի աշխատողների վարձատրության չափը, հաստիքները և վճարման կարգը հաստատում է մասնաճյուղի տնօրենը՝ համաձայնեցնելով համալսարանի ռեկտորի հետ:

## VIII. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Մասնաճյուղի վերակազմավորումը և լուծարումը իրականացվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
01503224